

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՄՄԱՌԿ-ԷԱՃԱՊԶԲ-2026/21 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	Ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	ճտքավոր կոշիկներ	Ծանոթություն-տվյալ ապրանքը ապրանքային նշան չունի	Ծանոթություն-տվյալ ապրանքը մակնիշ չունի	«Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ	Նախատեսված են համազգեստային/ծառայողական օգտագործման համար: Մատակարարվող արտադրանքը պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային արտադրության և համապատասխանի գործող նորմատիվ իրավական և տեխնիկական պահանջներին: Կոշիկի բարձրությունը կրունկից մինչև վերև պետք է լինի 21-23սմ: Կոշիկի վրա պետք է լինի շղթա՝ մետաղական գլխիկով և պլաստմասսե ատամիկներով (սkk): Կոշիկի վերին մասը պետք է

պատրաստված լինի բնական
երեսնամշակված կաշվից՝ սև գույնի,
1.3-1.5 մմ հաստությամբ: Կաշին
պետք է ապահովի
օդաթափանցություն և ձևի
կայունություն շահագործման
ընթացքում, իսկ հաստությունը
պետք է պահպանված լինի ամբողջ
մակերեսով՝ տեխնոլոգիական
թույլատրելի շեղումների
սահմաններում: Քթամասը պետք է
լինի փակ կառուցվածքի և
պարտադիր ունենա ամրացնող
միջադիր՝ մեխանիկական
ազդեցությունների նկատմամբ
դիմադրություն ապահովելու
նպատակով: Քթամասը և
կրունկային հատվածը պետք է
համալրված լինեն կրկնակի
պաշտպանիչ նյութով (գրանիտոր),
որը տեղադրված է արտաքին շերտի
տակ և ապահովում է լրացուցիչ
ամրություն, ձևի կայունություն,
մեխանիկական ազդեցությունների
նկատմամբ դիմադրություն և
կառուցվածքային պաշտպանություն
շահագործման ընթացքում:
Կրունկային հատվածում պետք է
նախատեսված լինի կոշտացնող

Ներդիր՝ կրունկի ֆիքսման և ձևի պահպանման նպատակով: Ներքին երեսպատումը պետք է պատրաստված լինի շնչող տեքստիլ նյութից կամ բնական կաշվից (ըստ մոդելի): Ներքին ներբանը պետք է ունենա հիգիենիկ հատկություններ, ապահովի խոնավության կլանում և օդափոխություն, լինի անատոմիական ձևավորմամբ և համապատասխանեցված ոտքի բնական դիրքին: Ներբանը կարող է լինել շարժական, սակայն պետք է ապահովի կայուն տեղադրում շահագործման ընթացքում: Արտաքին ներբանը պետք է պատրաստված լինի մաշակայուն և հակասայթաքող նյութից: Ներբանի հաստությունը պետք է կազմի քթամասում՝ 0.8-1.2 սմ, կրունկային հատվածում՝ 1.5-1.6 սմ, իսկ կրունկի բարձրությունը՝ 2.0-2.2 սմ: Ներբանի կառուցվածքը պետք է ապահովի կայուն հպում տարբեր մակերեսների վրա և նվազեցնի սայթաքման ռիսկը: Կոշիկը պետք է լինի ճտքավոր կառուցվածքի, ամրացման համակարգը՝ կապերով: Կարի և միացման հատվածները

պետք է իրականացված լինեն արտադրական տեխնոլոգիական պահանջներին համապատասխան՝ ապահովելով ամրություն և երկարակեցություն: Արտադրանքը պետք է ապահովի միասնական արտաքին տեսք և պահպանել ձևը շահագործման ընթացքում: Կոշիկների չափսերը պետք է լինեն 37-ից մինչև 47 ներառյալ: Չափսերի կոնկրետ բաշխումը և քանակները սահմանվում են Պատվիրատուի կողմից՝ ըստ ներկայացվող պատվերի, և մատակարարը պարտավոր է ապահովել պահանջվող չափսերի ամբողջական և ճշգրիտ մատակարարումը: Պատվիրատուն իրավունք ունի մինչև ապրանքների ամբողջ քանակով մատակարարումը պահանջել նմուշ (օրինակ)՝ տեխնիկական, կառուցվածքային և արտաքին տեսքի համապատասխանությունը գնահատելու նպատակով: Ներկայացված նմուշը ենթակա է հաստատման Պատվիրատուի կողմից, և մատակարարվող ողջ խմբաքանակը պետք է լիովին

					<p>համապատասխանի հաստատված նմուշին: Մատակարարը պարտավոր է ապահովել արտադրանքի համապատասխանությունը գործող նորմատիվ և տեխնիկական պահանջներին և Պատվիրատուի պահանջով ներկայացնել համապատասխանությունը հավաստող փաստաթղթեր (սերտիֆիկատներ, փորձարկման արձանագրություններ կամ այլ հավաստող փաստաթղթեր):</p>
	<p>ПОЛНОЕ ОПИСАНИЕ</p> <p>предлагаемого товара</p>				
	<p>«Гарун кари фабрика» ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЕЦДԱՊԶԲ-2026/21 ниже представляет полное описание предлагаемого им товара.</p>				
Номер лота			Предлагаемый товар		
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	
1					